

Ժ.-Տ. ԲՈՐԻ

ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑՈՒ ՏՊԱՐԱՆԻ ԾԱԿԱՏԱԳԻՐԸ
ՄԱՐՍԵԼՈՒՄ*

Հայերը պատմության մեջ կարևոր տեղ են զբաղում քաղաքակրթված հնագույն ժողովուրդների շարքում: Արարատ լեռը, որը եղել է նրանց ազգության օրրանը, այսօր էլ հանդիսանում է նրանց կրոնական և քաղաքական հարաբերությունների կենտրոնը, հակառակ նրան, որ բազմաթիվ դարերից ի վեր ավարարությունների և տիրապետության նպատակով կատարված ներխուժումներն ու ասպատակությունները, ինչպես նաև վաճառականության անհրաժեշտությունը հրեաների նման նրանց ցրել ու սփռել են Ասիայի և Եվրոպայի գրեթե բոլոր երկրներում:

Նրանց գլխավոր եկեղեցին, որ կարծվում է, թե հիմնվել է չորրորդ դարի սկզբին Ս. Գրիգոր Լուսավորչի կողմից, Սուրբ Էջմիածինն է, Արարատ լեռան ստորոտում, Երևանից 10-12 մղոն հեռու: Վերջինս մայրաքաղաքն է Պարսկահայաստանի, որը 1827 թ. դարձել է Ռուսահայաստան: Այս հռչակավոր սրբավայրը, ուր լուրաքանչյուր հայ հավատացյալ իր կյանքում գոնե մեկ անգամ պարտք էր զգում ուխտի գնալու, բարձրանում է մի ընդարձակ վանքի մեջտեղում, որ նստավայրն է Մայրազույն Պատրիարքի կամ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ու նրա վարդապետների, որոնք, ըստ Հայ Եկեղեցու նվիրապետության, կրոնավորների մասնավոր մի կարգ են և իրենց ազգի մեջ կազմում են զրազետ և գիտնական մարդկանց մի մարմին¹:

Հայերը բոլոր ժամանակներում իրենց իմացական հատկություններով կարողացել են զատորոշվել բարբարոս ժողովուրդներից, որոնք հաջորդաբար նվաճել են նրանց: Դեռևս Զ դարից նրանք ունեին ազգային գրականություն և մեծ թվով պատմական կարևոր ստեղծագործություններ, սակայն մինչև ԺԷ դարի կեսերը չեն ունեցել իրենց լեզվով հրատարակված տպագիր ոչ մեկ գիրք²:

Չեռագիր Աստվածաշունչ մատյանների և ծիսական այլ գրքերի հետզհետե աճող սղությունը, ինչպես նաև այն անհաշիվ սխալներն ու փոփոխակները, որ ներկայացնում էր լուրաքանչյուր բնագրի ընդօրինակությունը, հայ հոգևորա-

* Սույն գրվածքը քաղված է ԺԹ դարի ֆրանսիացի գրող և բանասեր Ժ.-Տ. Բորիի «Տպարանի սկզբնավորումը Մարսելում» խորագրով գրքից: Գիրքը հրատարակված է Մարսելում 1858 թ.: Հեղինակը պատմական բազմաթիվ փաստաթղթերի և արխիվային նյութերի հիման վրա մանրամասնորեն նկարագրում է այն բազում արգելքներն ու դժվարությունները, որոնց ենթարկվել են Ոսկան Երևանցին ու նրա հաջորդները Մարսելում իրենց գրահրատարակչական տասնամյա գործունեության ընթացքում:

¹ Գրվածքի վերնագիրը թարգմանչինն է:

² Tournefort, Relation d'un voyage du Levant, հրատ. 1717, Կայսերական տպարան, հատ. Բ, էջ 531 և շար., նաև էջ 402 և շար: **M. Boré**, Arménie, էջ 49, 51, 136 և շար.:

³ Հավանաբար հեղինակին հայտնի չեն եղել Հակոբ Մեղապարտի հրատարակությունները, որոնք տպագրվել են 16-րդ դարի սկզբին (թարգմ.):

կանությանն ի վերջո զգալ են տալիս տոյագրության դիմելու բացարձակ անհրաժեշտությունը:

1662 թ. Էջմիածնում գումարված ազգային-եկեղեցական ժողովը որոշում է ընդունում, որ բարձրաստիճան մի հոգևորական ուղարկվի Եվրոպա՝ այնտեղ հիմնելու տպագրական մի հաստատություն և հրատարակելու այն բոլոր գրքերը, որոնց գործածությունը հայերի մեջ առավել հաճախակի էր և ընդհանուր:

Այս որոշումը գործադրելու նպատակով է, որ Հակոբ Կարակոթի* Կաթողիկոսը նշանակում և, որպես իր փոխանորդը (նվիրակ), մասնավոր առաքելությամբ Եվրոպա է գործուղում Ոսկան Երևանցուն, որը միաժամանակ Յուշուավանի** արքեպիսկոպոսն էր և աստվածաբանության դոկտոր՝ վարդապետ²:

Այս հոգևոր առաջնորդը, Մայրագույն Պատրիարքի հրահանգի համաձայն, մեկնում է Ասիա Հոռն, որտեղ մնում է շուրջ տասնհինգ ամիս: Ապա 1664 թ. այնտեղից անցնում է Ամաստեղում, ուր փորագրել և ձուլել է տալիս հայկական տառեր և հիմնում իր մասնավոր առաքելության առարկան հանդիսացող տպագրական մի արհեստանոց: Նա այդ արհեստանոցը կոչում է «Սուրբ Էջմիածնի և Սուրբ Սարգիս Ջորավարի անվան տպարան»:

Այս հաստատության առաջին հրատարակությունն է լինում քառածալ մի Աստվածաշունչ***, որը տպագրվում է 1666 թվականին Ոսկան Երևանցու կողմից իր եղբորորդու՝ Սողոմոն արկավազ Լևոնյանի գործակցությամբ: Հետագա տարիներին լույս են տեսնում բազմաթիվ այլ հատորներ, որոնց թվում նաև 1668 թվականը կրող ութածալ մի «Նոր Կտակարան»: Բայց թվում է, թե Ոսկանը, որը դավանում էր ուղղափառ հավատը, վերջում ինչ-որ խղճահարություն, ներքին մի անհանգստություն է զգում, որ այդպես կաթողիկե գրքեր է տպագրում հերետիկոսներով բնակեցված մի քաղաքում, ուստի ծրագրում է թողնել Հոլանդիան՝ մեկնելու համար Ֆրանսիա³:

Արդարև, 1669 թ. մայիսի 21-ին նա արդեն Ֆրանսիայում է, որտեղից լատիներեն լեզվով մի նամակ է ուղարկում Լյուդովիկոս Ժ-ի-ին: Նամակում նա հիացմունքի ամենազերմ զգացումներ է արտահայտում Ֆրանսիայի այս մեծ միապետի

* Խոսքը Հակոբ Դ Ջուղայեցի Կաթողիկոսի (1655-1680) մասին է (թարգ.):

** Խոսքը վերաբերում է Ուշիի Սուրբ Սարգիս եկեղեցուն, որի առաջնորդն է եղել Ոսկան Երևանցին 1655-ից 1662 թթ. (թարգմ.):

² Richard Simon, *Histoire critique du vieux Testament*, հրատ. 1685, էջ 282, նաև՝ *Histoire critique des Versions du nouveau Testament*, հրատ. 1690, էջ 196: Le Long, *Bibliotheca sacra*, հրատ. 1709, հատ. Ա, էջ 233: J. Saint-Martin, *Mémoires historiques et géographiques sur l'Arménie*, հատ. Ա, էջ 445, որտեղ նշված է Հակոբ Դ Կաթողիկոսի անունը, որը գահակալել է 1665-ից մինչև 1680 թվականը:

*** Հավանաբար հեղինակը նկատի ունի Աստվածաշնչի առաջին տպագիր հրատարակությունը: Հայտնի է սակայն, որ մինչ այդ տպարանն ունեցել է մի քանի այլ հրատարակություններ (թարգ.):

³ «Ipsius voluntas fuit quod typographia ..., quae antea fuerat apud hereticos Amsterdam ad libros catholicos Romanorum modo componendum, illam Massiliae transtulit» (Ջյուլոմնասյեթի աղերսագիրը Պրովանսի գավառապետին և տեղի արդարադատության խորհրդականներին՝ քաղված Բոնիֆասի տեղեկագրից. suite des Arrêts du parlement de Provence, հատ. Ա էջ 412:

հանդեպ և խնդրում նրան, որ Փարիզի Թագավորական գրադարանի համար քարեհանձի ընդունել իր հրատարակած հայկական Աստվածաշնչից մի օրինակ⁴:

Ոսկանը չի քավարարվում իր այս առաջին դիմումով: Նա գալիս է Փարիզ և հռչակավոր արևելագետ, ազնվատոհմ ասպետ Լորան դ'Արվյուլի գործուն միջնորդությամբ 1669 թ. օգոստոսի 11-ին թագավորից ստանում «թույլտվություն հաստատելու տպարան Լիոնում կամ Մարսելում և կամ թագավորության որևէ այլ քաղաքում տպագրելու համար հայերեն լեզվով ամեն տեսակ գրքեր, որոնք մեն օգտակարություն կարող են ունենալ հասարակությանը և մեծապես հեշտացնել արևելյան լեզուների իմացությունը»⁵:

Այս առանձնաշնորհման մասին վկայող թագավորական գիրը, շարադրված լատիներեն լեզվով, առաքվում է արքունի դիվանապետ Սեզիեի կողմից և հանձնվում Ոսկանին՝ հայտնի գիտնական դոկտ. Ռիշար Սիմոնի ձեռքով, որի գրվածքներից ենք քաղել այս էջերում ընդգրկված տեղեկությունների մեկ մասը:

Ոսկան արքեպիսկոպոսը, որը քաջ ծանոթ էր լատիներեն լեզվին, որոշ անհանգրատություն է զգում՝ կարդալով վերոհիշյալ առանձնաշնորհման մեջ տեղ գտած հետևյալ սահմանափակումը. «...պայմանով, որ այդ գրքերը կաթոլիկական, առաքելական և հռոմեական Եկեղեցու կրոնին և հավատին հակառակ ոչինչ չպարունակեն»: Ոսկանի անհանգստության պատճառն այն չէր, որ իր համար ընդունելի չէր այս նախադասությունը, որը կարող էր միշտ մեկնաբանվել իր իսկական իմաստով, այլ այն, որ նա երկյուղ էր կրում, թե հետագայում այն կարող էր պատրվակ ծառայել այլափոխելու, եղծելու և վերացնելու հայկական ձեռի գործածությունը Հայ Եկեղեցուն: Այսուհանդերձ վստահելով ֆրանսիական իշխանությունների ուղղամբտությանն ու թագավորի հովանավորչությանը՝ նա հաշվի չի առնում այդ և որոշում է 1672 թ. վերջին ամիսներին Ամստերդամից Մարսել տեղափոխել իր տպարանի սարքավորումները⁶:

Հոռմի Եկեղեցու ղեկավարությունը, սակայն, հենց որ իմանում է այս որոշման մասին, իսկույն կոչ է ուղղում Մարսելի թեմակալ եպիսկոպոսին ու հորդորում արթնանտություն՝ հայտնելով, որ Ոսկանը շարունակում է իր հարաբերությունները Հայոց Կաթողիկոսի հետ: Ահա թե ինչու Պր. դը Ֆորբեն-ժանսոնը, որն այն ժամանակ զբաղեցնում էր մեր քաղաքի (Մարսելի - ծնթ. թարգ.) առաջնորդական Աթոռը, նախ տպագրիչ արքեպիսկոպոսից պահանջում է «Հավատո մի դավանություն»՝ համապատասխան Հռոմեական Եկեղեցու վարդապետությանը՝ գրված միաժամանակ հայերեն և լատիներեն լեզուներով, ապա նոր տպարանը դնում է իր ընդհանուր փոխանորդի հսկողության տակ և վերջապես իրեն վերապահում տպարանի ապագա հրատարակությունները մեկնաբանել տալու իրավունքը հայոց լեզվին գիտակ մի կաթոլիկ քահանայի կողմից, որը հարմար ժամանակին կկանչվի Հռոմից:

⁴ Le Long, loco citato, քերված է մի հատված Ոսկանի Աստվածաշնչից:

⁵ Recueil des Actes, Titres et Mémoires du Clergé de France, édit. in-folio, t. 5, col. 1524: - Boniface, loco citato, էջ 410:

⁶ Le Long, loco citato, հատ. Բ, էջ 469, ուր նշված է 1672 թ. Ամստերդամում տպագրված հայերեն մի Սաղմոսարանի մասին:

Այսպիսի իրավիճակում է ահա, որ Ոսկանն սկսում է գործի անցնել իր նոր հաստատության մեջ՝ պահպանելով «Սուրբ Էջմիածնի և Սուրբ Սարգիս Ջորավարի տպարան» նախկին անունը: Սկզբում նա հույս էր ունեցել, որ կկարողանա տպարանի բացումը կատարել իր սեփական միջոցներով՝ իրականացնելով Հայ Եկեղեցու Ժամագրքի կամ Մաշտոցի առաջին տպագրությունը 3000 օրինակ տպաքանակով և 8 մեծադիր գծանկարներով, որոնց բնօրինակները պատրաստել էր տվել Կունդին անունով մի փորագրիչի: Սակայն քանի որ որոշ ժամանակից ի վեր նա դրամական ոչ մի օգնություն չէր ստանում Արևելքի իր դավանակիցներից⁷, ստիպված իրեն բաժնեկից է դարձնում մի երրորդ անձի՝ իր ծրագիրն իրագործելու համար: Այդ անձը Թադևոս անունով մի քահանա էր՝ նրա հայրենակիցը, որն ուղեկցել էր նրան Փարիզից Մարսել, և որի ընտրությունը, որպես բաժնեկից, Ոսկանի կատարած ամենադժբախտ ընտրություններից մեկը եղավ, քանզի այս մարդու հետագա գործելակերպի և վարմունքի մեջ ամեն ինչ թույլ էր տալիս մտածել, որ նա, առաջնորդված ինչ-որ թաքուն մի շահախնդրությունից, որ շատ ավելի ուժեղ էր, քան առերևույթ շահը, հետամուտ էր եղել բաժնեկից դառնալու այն որոշակի նպատակադրումով, որ իր բոլոր ջանքերն ի գործ դնի՝ խափանելու Ժամագրքի հրատարակությունը և պատճառ դառնալու տպագրական հաստատության կործանման⁸:

Ոսկանը մասնակից դարձնելով նրան այդ հատորի ինչպես ծախսերին, այնպես էլ օգուտներին, խոհեմությունն է ունենում սակայն իրեն վերապահելու դրա սրբագրությունն ու տպագրությունը: Այդ ցույց է տալիս 1673 թվակիր այն համաձայնագիրը, որով պայմանավորվող երկու կողմից լուրաքանչյուրը պարտավորվում էր հայթայթել հազար դահեկան՝ բանվորներին աշխատավարձ վճարելու, տպագրական թուղթ և ամեն տեսակ անհրաժեշտ պիտույքներ գնելու համար այն պայմանով, որ գործն ավարտվելուց հետո արքեպիսկոպոսը իրավունք էր ունենալու ընդհանուր տպաքանակից նախապես իր համար վերցնելու «երեք հարյուր հիսուն օրինակ Ժամագիրք սրբագրության աշխատանքը կատարելու և տպագրության գործը ղեկավարելու դիմաց», իսկ մնացածը բաժանվելու էր երկու հավասար մասերի⁹:

Հետագա դեպքերը, սակայն, չուշացան ապացուցելու Ոսկանի ձեռք առած նախագրուչությունների անբավարարությունը: Արդարև, Ժամագրքի առաջին պրակը հազիվ մամուլի տակ էր դրված, որ Թադևոսն սկսում է ամեն կարգի արգելքներ հարուցել և, եթե իրոք հավատ պիտի ընծայենք զմյուռնահայերի խնդրանքին, որը մշտն էր արդեն, այս բաժնեկից քահանայի («մի մարդ, որ անարժան է ոչ միայն քահանա, այլ նույնիսկ քրիստոնյա կոչվելու»)՝¹⁰ վատ վարմունքին և չդադարող թշնամանքներին պետք է վերագրել տպագրիչ արքեպիսկոպոսի մահը:

⁷ Ոսկանն այդ մասին զանգատվում է հենց գրքի առաջաբանում:

⁸ «Si illi creditis nostram typographiam destruestis et scientiae nostrae extinguetis» «Եթե դուք նրան հավատաք, ապա կքանդեք մեր տպարանը և կոչնչացնեք մեր գիտությունը» (Զմյուռնահայերի վերևում գտնված աղերսագիրք):

⁹ Boniface, loco citato, էջ 410: Recueil du Clergé, t. 5, col. 1525:

¹⁰ «Non tantum sacerdos sed etiam christianus non est dignus vocari», Boniface, loco citato, էջ 412:

Ոսկան Երևանցին վախճանվում է Մարսելում 1674 թվականի առաջին ամիսներին: Նրա մահից անմիջապես հետո Տեր Թադևոսը կնքել է տալիս տպարանը և զավատական դատարանի տեղակալին կանչում մնջեցյալի բնակարան: Արդ, այդ ժամանակ ժամագրքի տպագրությունը դեռ նոր էր հասել տասնվեցերորդ սրակին: Կար մի ուրիշ գիրք՝ Դավթի «Սաղմոսաց գիրքը», որի հրատարակության իրավունքը պատկանում էր միայն հանգուցյալ արքեպիսկոպոսին, և որի տպագրությունն առավել ևս դանդաղ էր ստաշ գնացել. տպագրվել էր ընդամենը ութ պրակ: Այժմ արդեն արդարադատության տնօրինության տակ դրված այս երկու գրքերի տպագրությունը վերսկսելու և իրենց հաշող ավարտին հասցնելու համար Ոսկան Երևանցու բեռորդի և նրա ժառանգորդ Սողոմոն Լևոնյանն ստիպված է լինում մեծ ջանքեր ի գործ դնել, որպեսզի համաձայնության գա Թադևոս քահանայի հետ՝ հանձն առնելով ենթարկվել նրա առաջարկած պայմաններին:

Նույն տարում, 1674 թ. ստորագրված պայմանագրով, համաձայնություն է ձեռք բերվում, որ ժամագրքի և Սաղմոսարանի բոլոր պրակները, ինչպես արդեն տպագրվածները, այնպես էլ տպագրվելու համար մնացած պրակները, տպագրվելուց հետո հաջորդաբար ի պահ պիտի դրվեն իրավաբան Լըֆլերի մոտ ու պիտի մնան այնտեղ, հերաշխավորություն Թադևոս քահանայի, մինչև ժամագրքի ամբողջական տպագրության ավարտը և 3000 օրինակ տպաքանակի բաժանումը ըստ սկզբնական համաձայնագրի:

Սողոմոն Լևոնյանը հավատարմորեն և նշտությամբ պահպանում է Թադևոս քահանայի կողմից պարտադրված բոլոր պայմանները: Ստորագրված պայմանագրից դեռ մեկ տարի էլ չանցած՝ նա իր լինագոր փոխանորդ Նասիպ դը Գրեգուարի* և գրաշար Մաթյո դը ժոաննիսի** օգնության շնորհիվ ոչ միայն ավարտում է պայմանագրով նախատեսված տպագրությունը, այլ նաև լույս ընծայում ուրիշ զանազան հայերեն գրքեր:

Այս գրքերը քննության են ենթարկվում և սրբագրվում ժան Ակոյր*** անունով հայ կաթոլիկ մի հոգևորականի կողմից, որը Հոռմից պաշտոնապես գործուղվել էր Մարսել, և որի ճանապարհածախսը՝ երեք հարյուր դահեկան, վճարում է Սողոմոնը¹¹:

Այսպիսի վճռական մի փորձությունից անցնելուց հետո, Ս. Լշմիածնի տպագրիչները Տեր Թադևոսին առաջարկում են, որ անմիջապես կատարվի ժամագրքի օրինակների բաժանումը: Այդ գործողությամբ նրանք ակնկալում էին ձեռք բերել միաժամանակ երկու արդյունք՝ նույնքան ապահով, որքան ցանկալի. նախ ամեն տեսակ հարաբերությունների խզումը այդ կոպիտ և բանաարկու մարդու հետ,

* Սա ամենայն հավանականությամբ հայ վաճառական Նասիպ Գրեգորն է, որը դրամական օգնություն է ցույց տվել Սողոմոնին (թարգմ.): ժամագրքի յուրաքանչյուր թերթի շարվածքի համար գրաշարին վճարվել է երեք դահեկան՝ առավել նրա սննդի ծախսերը (Ժ.-Տ. Բորի):

** Ազգությամբ հայ գրաշար Մաթևոս Հովհաննիսյանն է (թարգմ.):

*** Ենթադրվում է, որ խոսքը վերաբերում է լատինաբան հայերենով գրված գրքերի հեղինակ Հովհաննես Հոլով Կոստանդնուպոլսեցուն (թարգմ.):

¹¹ Boniface, loco citato, էջ 411: - Recueil du Clergé, t. 5, col. 1526:

այնուհետև առաջիկայում նյութական որևէ օգուտ ստանալու հեռանկարը, որին այնքան կարիք ուներ Ոսկանի կողմից հիմնված տպարանը:

Տեր Թադևոսի հաշիվը հայտնապես այլ բան էր, սակայն: Նյութական օգուտը նրան քիչ էր շահագրգռում: Նրա նպատակն ավելի հայկական տպարանի կազմալուծումն էր, քան դրա բարգավաճումն ու ամրացումը: Ուստի նա ոչ միայն համաձայն չի լինում բաժանման առաջարկին, այլև մի դիմումնագիր է ներկայացնում Գավառական դատարանի տեղակալին՝ ամբաստանելով տպագրիչներին, թե իբր ժամագիրքը, որն արդեն վերանայված և ստուգված էր Ակոլբ քահանայի կողմից, դեռևս պարունակում է «ուղղափառ հավատին հակառակ հերձվածող բառեր», և պահանջում է այդ գրքի ութ պրակների սրբագրությունն ու վերատպությունը լիազոր փոխանորդ Նասիպ դը Գրեգուարի ծախսով: Բացի այդ, բարոյական շահագրգռվածության պատրվակով քողարկելու համար իր այդ զգվելի ամբաստանությունը, նա պահանջում է, որ գրքի տիտղոսաթերթում հստակորեն նշվի, որ տպագրության ծախսերը հավասարապես հոգացել են Ոսկան արքեպիսկոպոսն ու Տ. Թադևոս քահանան:

Այս կրկնակի պահանջն ընդունվում է: Բայց Մարսելի խորհրդարանը իր 28 սեպտեմբեր 1675 թվակիր հրամանագրով կարգադրելով հանդերձ, որ երկու գործակիցների անուններն էլ արձանագրվեն ժամագրքի տիտղոսաթերթի վրա, բեկանում է դատարանի տեղակալի վճիռը և կողմերին հետ ուղարկում «գիրքը ներկայացնելու թեմակալ եպիսկոպոսի մեծ փոխանորդին՝ տեսնելու համար, թե պե՞տք է արդյոք սրբագրել»:

Թադևոսը չի բավարարվում, որ օրինական ճանապարհներով ընթանա Բարձրագույն ատյանի կայացրած այս որոշման կատարումը: Չարախնդությամբ լցված՝ նա իր մի դիմումնագրով զրպարտում է Նասիպ դը Գրեգուարին որպես «խաբեբա, թափառաշրջիկ, պարտազանց և խոստումնադրուծ» և այդ միջոցով կրոնական իշխանությունից կորզում լրացուցիչ մի վճիռ, որով արտոնություն է տրվում նրան «բռնելու և ձերբակալելու Սողոմոն Լևոնյանի այդ փոխանորդին, որտեղ էլ նա պատահի»:

Նասիպ դը Գրեգուարը, որը բանտ էր նետվել տվյալ ժամանակաշրջանի բոլոր օրենքների անտեսումով, խորհրդարանից պահանջում է, որ ազատ արձակեն իրեն: Վճարելի ատյանի 9 հունիս 1676 թվակիր դատավճռով նա ազատվում է կալանքից, սակայն խորհրդարանը որոշում է, որ ժամագիրքը կրկին «վերատեսության պետք է ենթարկվի թեմակալ առաջնորդի մեծ-փոխանորդի կողմից, մասնագետների հետ միասին, քննելու համար, թե կաթոլիկական, առաքելական և հռոմեական կրոնին հակառակ որևէ բան կա՞ նրա մեջ»¹²:

Համաձայն այս որոշման, հատորը հանձնվում է Պր. դը Ֆորբեն-Ժանսոնին: Այս բարձրաստիճան եկեղեցականը, տվյալ իրավիճակում, ցանկանալով ազատվել Հռոմ մարդ ուղարկելու և այնտեղից մի թարգմանիչ բերել տալու պարտականությունից՝ գրաքննության աշխատանքը վստահում է Թովմաս Հերաբիեղ անունով մի հայ քահանայի*, որ այդ շրջանում անցնում էր Մարսելից՝ Փարիզ գնալու համար:

¹² Boniface, նույնը, էջ 411: - Recueil du Clergé, t. 5, col. 1527:

* Սա հայկական աղբյուրներում հայտնի է Թովմաս Հայրապետյան անունով (թարգ.):

Այս նոր թարգմանիչը, փոխանակ բարեհոգություն ցուցաբերելու և օգտակար լինելու իր տպագրիչ հայրենակիցներին, իր դաժանությամբ զերազանցում է Թադևոսին: Սա չի սահմանափակվում միայն վերջինիս կողմից նշված ութ պրակները վերստին տպագրել տալու պահանջով, այլ ինքն իսկ մատնանշում է ութ ուրիշ պրակներ ևս, որոնք իբր արատավորված են հերետիկոսությամբ, հետևաբար պետք է անպայման փոխարինվեն:

Նասիպ դը Գրեգուարը վերատպության համար պահանջվող ծախսերը Ոսկան Երևանցու քնտրողուն խնայել տալու նպատակով առաջարկում է անձամբ կատարել անհրաժեշտ համարվող սրբագրությունները մի «վրիպակի» օգնությամբ, որ կորվի տպագրված վերջին պրակի ամենավերջին էջում այնպիսի ձևով, որ այդ վրիպակը լինի «ամրակայուն» և հնարավոր չլինի այն պոկել առանց գիրքը դարձնելու թերի և արատավոր:

Մարսելի խորհրդարանը, որին ներկայացվել էր այս առաջարկությունը, 1678 թ. ապրիլի 1-ին որոշում է կայացնում, որ «Մարսելի եպիսկոպոսն այդ գործը կտնօրինի այնպես, ինչպես ինքը հարմար կնկատի»¹³: Այս որոշման հիման վրա Մարսելի եպիսկոպոս Պր. դը Ֆորբեն-ժամսոնը նույն տարվա հունիսի 7-ի հրամանով հայ տպագրիչներին հրահանգում է, որ իր տրամադրության տակ դրվի տպագրված բոլոր պրակներից երկու օրինակ, «որպեսզի կարողանա սրբագրել այն սխալները, որոնք կարող են դրանց մեջ սպրդած լինել»: Բայց այս հոգևոր առաջնորդին բախտ չի վիճակվում կատարելու այդպիսի փափուկ մի աշխատանք: 1679 թ. նա Մարսելից տեղափոխվում է Բուվե՝ թափուր թողնելով Մարսելի եպիսկոպոսական Աթոռը, և թեմի ղեկավարումը ժամանակավորապես վստահվում է փոխանորդ կանոնիկոս Հայր Ֆիլիպ դը Բոսենին: Բայց, հակառակ բոլոր նախատեսություններին, Աթոռը թափուր է մնում մինչև 1682 թվականը:

Այս ընդհանուր փոխանորդը, որն այդ օրվանից դարձել էր Ս. Էշմիածնի տպագրիչների բացարձակ իրավատերը, վաղուց ծանոթ էր իր հրատարակած կրոնական զանազան աշխատություններով և լանսեմական զաղափարներով¹⁴: Արդ, քանի որ Ինճոկենտիոս ԺԱ Պապը Լյուդովիկոս ԺԳ-ի հետ իր ունեցած երկարատև և բուռն հակառակությունների պատճառով հեռացել էր հիսուսյաններից (որոնք կողմնակից էին Ֆրանսիայի միապետին) և իր ամբողջ իշխանությամբ հովանավորում էր Իպրի եպիսկոպոսին, Տեր Ֆիլիպ դը Բոսեն այդ ժամանակ դասվում էր ծայրահեղ մոնոստանականության¹⁵ պաշտպանների շարքին: Իր նոր

¹³ Boniface, նույնը, էջ 411:

¹⁴ Յանսեմականությունը ԺՁ դարի կեսերին, աստվածաբանական բանավեճերի ժամանակ, Յանսենուսի կողմից առաջացած կրոնական մի շարժում էր աստվածային շնորհների և նախասահմանության մասին, մի վարդապետություն, որին հակադրվեցին հիսուսյանները Ֆրանսիայում Լյուդովիկոս ԺԳ-ի գլխավորությամբ (ծնթ. թարգմ.):

¹⁵ Մոնոստանականությունը Բ դարում առաջացած կրոնական մի աղանդ էր, որի հիմնադիրն էր փոլովիացի Մոնոստանուսը: Սա ասում էր, թե ինքը Բրիստոսի խոստացած միթոսարիչն է, դատապարտում էր կրկնամուսնությունը և ուսուցանում խիստ պահեցողություն: Պաշտոնական Եկեղեցին ուժգնորեն պայքարեց այս աղանդի դեմ, որի հետևորդները մեծ տեղ էին տալիս մարգարեներից

պաշտոնում հեղինակություն ձեռք բերելու համար սրա առաջին գործը լինում է Մարսելում հաստատել «հավատի տարածման մի միաբանություն», ճիշտ Հոռմում եղածի մեծ մասով նպատակ ունենալով բնաջնջել ամեն հերետիկոսություն և «ամեն տեսակ անհավատարմություն իր թեմում»¹⁶:

Այնուհետև նա եռանդուն կերպով զբաղվում է փաստաթղթեր կազմելով հայերի դեմ, ինչպես այդ հաստատում է Մարսելի պետական գրադարանում պահպանված ժամագրքի մեկ օրինակը, որի տիտղոսաթերթի վրա, ինչպես նաև 408-րդ և վերջին էջերում կան հետևյալ ինքնագիր ստորագրությունները.

«Թադևոս, քահանա (հայերեն լեզվով) - Ֆիլիպ դը Բոսե, կանոնիկոս և ընդհանուր փոխանորդ - Մարգրիտ Ծավ¹⁷ - Թովմաս Հերաբիեդ - Սոսեն, ճոտար-քարտուղար»:

Բացի սրանից, նույն օրինակի տիտղոսաթերթի ներքևում երևում է մի ստացականի բնօրինակը՝ ձևակերպված այսպես. «Դրված է եպիսկոպոսարանի բնագրերի պահասենյակում՝ համաձայն թեմակալ առաջնորդի մեծ-փոխանորդի 24 հոկտեմբեր 1679 թվակիր հրամանագրի»: Ստորագրված՝ Սոսեն (25 հոկտ. 1679 թ.):

Տիտղոսաթերթի վրա նշված է, որ ժամագիրքը՝

«Տպագրված է Ս. Էջմիածնի և Հուրիի (=Ուշիի) Սուրբ Սարգիս Զորավարի տպարանում՝ աստվածաբան Ոսկան արքեպիսկոպոսի նախաձեռնությամբ ու սրբագրություններով և նույն Ոսկանի ու երևանցի Թադևոս քահանայի ծախսերով, Մարսելում, 1673 թ. և հայոց թվականի 1122»:

Այս բոլորից հստակ կերպով երևում է, որ Մարսելի խորհրդարանի 1679 թվականի հոկտեմբերի վճիռը, որը վերաբերում էր տիտղոսաթերթի բովանդակության համար հրահանգված փոփոխություններին, արդեն ամբողջապես գործադրված էր:

Այսպիսով այդ ժամանակաշրջանում մնում էր միայն որոշել, թե կարիք կա՞ր արդյոք հատորի մեջ փոփոխություններ ներմուծել: Այդ մասին վերջնական կարծիք հայտնելը թողնված էր թեմակալ եպիսկոպոսին կամ այն եկեղեցականին, որն այդ ժամանակ նրա պաշտոնակատարն էր: Այս հարցում հայ տպագրիչների առջև հարուցված դժվարությունները, սակայն, դեռ շատ հեռու էին վերջնական լուծում ստանալուց: Հերետիկոսական մոլորություններ տպագրած լինելու մեղադրանքներն ամեն օր փոփոխվում և բազմապատկում էին: Թովմաս Հերաբիեդն այլևս առաջվա նման չէր բավարարվում պահանջելով սրբագրությունն այն հատվածների, որոնք կարող էին հակառակ թվալ կաթոլիկ հավատին վերաբերող էական հոդվածներին. նա, բացի դրանից, ուզում էր փոփոխել Հայ Եկեղեցուն հատուկ արարողություններն ու ծիսական սովորությունները և արգելել, որ Ոսկան Երևանցու ժամագրքում գոյություն ունենան այնպիսի բաներ, որոնք Հոռմում անգամ հան-

նրանց դասելով եպիսկոպոսներից վեր և այդպիսով սպառնալով Եկեղեցու մկրտապետությանը (ծմբ. թարգմ.):

¹⁶ Կրոնական այս միաբանությունը, որը հիմնված էր 1679 թ. սեպտեմբերի 7-ին, շատ երկար կյանք չունեցավ: Տե՛ս Belsunce, Antiquité de l'Eglise de Marseille, հատ. Գ, էջ 437:

¹⁷ Սողոմոն սարկավազի կինը՝ ծնված Մարսելում: Տե՛ս Tournefort, loco citato, հատ. Բ, էջ 407, նաև՝ Richard Simon, Lettres choisies, հրատ. 1764, հատ. Բ, էջ 143:

դուրժված էին հույների, մարոնիտների և Արևելքի մյուս ժողովուրդների կողմից սպազրված գրքերում:

Նրա սրբագրելու մոլությունն այն աստիճանի էր հասնում, որ նա իրեն իրավունք էր վերապահում Հայկական տոմարը վերաձևելու ըստ Գրիգորյան տոմարի և հերետիկոսություն համարելու թվականների և ամսունների տարբերությունները¹⁸:

Այսօրինակ վարմունքը վկայությունն էր ոչ այնքան աստվածաբանական ցիտություն մեջ նրա ունեցած կարողության, որքան Հռոմի հավատաքննիչների մոտ ինքն իրեն արժևորելու համար նրա ցուցաբերած չափազանցված եռանդի: Նաև այդ վարմունքը Ֆրանսիայում առաջ բերեց բազում զանգատների և բուռն քննադատությունների մի այլք, որ ուղղված էր ոչ միայն թարգմանչի դեմ, որն առաջարկում էր դրանք, այլ նաև թեմակալ առաջնորդի մեծ-փոխանորդի դեմ, որը նրան հյուրընկալում էր իր մոտ և հովանավորում իր հեղինակությամբ:

Հայերին համարձակորեն և մեծ հեղինակությամբ պաշտպանող եկեղեցականների միջից ամենից առաջ պետք է առանձնացնել Փարիզից հայր Պիդուին, գիտնական մի հոգևորական, որ Արևելքում երկար տարիներ առաքելական քարոզությամբ է գրաղվել¹⁹: Այս հավատալի մարդու կողքին, այնուհետև, պետք է հիշել Պր. Պիկին՝ Սորբոնի աստվածաբանության դասախոսին, որը 1681 թվականին հրատարակված իր բազմաթիվ մասնակներում մեծ կորովով և հմտությամբ պայքարեց Թովմաս Հերաբիեղի մտացածին սրբագրությունների սխտեմի դեմ: Ս. Էջմիածնի տպարանի հրատարակությունների պաշտոնական այս գրաքննիչը նույն տարվա մայիսի 9-ին լույս տեսնած իր մեկ գրությամբ ի գուր փորձեց պատասխանել նրան: Իր այդ ձախավեր պարսավագրով նա քարոյապես այնքան վարկաբեկեց իրեն, որ թեմակալ առաջնորդի մեծ-փոխանորդն ինքը շուտով հարկադրված եղավ գրիչ վերցնել ինքնապաշտպանության համար:

1682 թ. մայիսի 26-ին դ'Էստամպ եպիսկոպոսը Փարիզից հայտնում է, որ ինքը նշանակված է 1679 թվականից ի վեր թափուր մնացած Մարսելի եպիսկոպոսական Աթոռի զահակալ: Իր պաշտոնավարության հենց առաջին օրվանից նա հաշիվ է պահանջում Ֆիլիպ դը Բոսեից հայերի նկատմամբ իր ունեցած վարմունքի համար: Այս նախկին փոխանորդը նոր առաջնորդին ուղղված գրավոր մի հայտարարությամբ փորձում է արդարանալ՝ բացահայտորեն նշելով, որ ինքը հավանություն է տվել Հերաբիեղի կողմից պահանջված ոչ բոլոր սրբագրություններին: Իսկ ինչ վերաբերում է այն սրբագրություններին, որոնք իր հավանությանն էին արժանացել, նա, ինքնապաշտպանության համար, առաջ է քաշում կրոնական համագումար ժողովների և հատկապես «Հավատի տարածման ուխտի» հեղինակավոր կարծիքը: Կատարված խիստ կանաչական ջնջումների կապակցությամբ, սակայն, նա սահմանափակվում է միայն նշելով. «Բացթողումները կարող են կա՛մ տպագրական վրիպումներ լինել, կա՛մ եպիսկոպոսի իշխանությամբ կատարված ուղղումներ»²⁰:

¹⁸ Richard Simon, *Lettres choisies*, հատ. Բ, էջ 139:

¹⁹ Tournafort, loco citato, հատ. Բ, էջ 403: Richard Simon, նույնը, հատ. Բ, էջ 128 և 134:

²⁰ Mémoire de Ph. de Bausset, cité par R. Simon, *Lettres choisies*, հատ. Բ, էջ 130, 133 և 134:

Այս բանավեճի ընթացքում հանկարծ մի աղմուկ է տարածվում, թե այդ նույն «Հավատի տարածման ուխտը», կարդիմալ Նեոլիի տեղեկագրի հիման վրա, հրապարակել էր մի հրամանագիր, որով Թովմաս Հերաբիեղը երեք տարվա համար հաստատվել էր Մարսելում որպես առաքելական քարոզիչ և «հայկական հրատարակությունների վերատեսուչ՝ այդ պաշտոնի համար սահմանված հատուկ թոշակով»:

Դա նշանակում էր Ֆրանսիայում թագավորի հովանավորության տակ ապրող հայերին մի տեսակ ենթարկել հոռոմեական մի միաբանության քմահաճույքին: Արդ, այդ ժամանակ Լյուդովիկոս ԺԴ-ն բացահայտ թշնամական դիրք էր բռնել վատիկանի դեմ: Նա երեսուներեղ եպիսկոպոսներից բաղկացած եկեղեցական բարձրագույն մի ժողովի միջոցով հայտարարել, ապա քաղաքային բոլոր խորհրդարանների կոմից արձանագրել և աստվածաբանական ու կանոնագիտական ամբիոններում դասավանդել էր տվել Ֆրանսիայում ծայրահեղ մոնոսականության ոգին խորտակելու սահմանված «չորս առաջարկություններ», որոնք պատմության մեջ հայտնի են դարձել «Գալլիկանյան ազատություններ»²¹ անունով:

Այդ շրջանում և որոշ ժամանակից ի վեր Փարիզում էր գտնվում Սողոմոն Լևոնյանը՝ թագավորական ատյանից արդար դատավճիռ խնդրելու համար: Նա այստեղ լավ ընդունելության է արժանանում՝ տրված լինելով, որ Հերաբիեղի զբաղեցրած պաշտոնը Մարսելի եպիսկոպոսի կամ նրա մեծ-փոխանորդի կողքին հստակորեն ցույց էր տալիս Հռոմի թաքուն իշխանությունը: Լյուդովիկոս ԺԴ-ն, որոշած լինելով թույլ չտալ, որ հավատաքնությունը տարածվի իր թագավորության մեջ, հրաման է տալիս Պրովանսի շրջանի (հարավային Ֆրանսիա) արդարադատության ներկայացուցիչ Պր. Մորանին տեղեկություններ հաղորդել իրեն. «հավատի տարածման ուխտի» կողմից նշանակված և նույն «ուխտի» կողմից վարձատրվող այս վերատեսչի մասին: Նա միաժամանակ հրահանգում է, որ պահպանվի հայերին տրված առանձնաշնորհումը իրենց գրքերի տպագրության համար²²:

1683 թ. փետրվարի 25-ին և նույն թվականի մարտի 1-ին Թովմաս Հերաբիեղը ենթարկվում է երկու հաջորդական հարցաքնությունների, որոնց ընթացքում հայտարարում է, որ ինքը «1676 թվականին Մարսելից անցնելիս Պր. դը Ֆորբեն-ժանտոնից հրաման է ստացել բնակվելու այդ քաղաքում և հանձն առնելու հայերեն գրքերի սրբագրությունը» և որ ինքը, «բացի դրանից, այդ ժամանակից ի վեր մշտապես ծառայել է թիապարտների հիվանդանոցում՝ հիվանդ թուրքերին դարձի բերելու, ինչպես նաև, որպես խոստովանահայր, առագաստանավերի վրա թիավարության դատապարտված հանցագործներին խոստովանեցնելու համար», և վերջապես ինքը «երբեք հավատաքննիչի հանգամանք չի ունեցել և հավատաքննչական ոչ մի գործ չի կատարել»:

²¹ Վարդապետություն, որի նպատակն էր պաշտպանել ֆրանսիական եկեղեցու (Գալլիկան եկեղեցի) անկախությունը պապականության դեմ: Այս ուսմունքը աստվածաբանորեն ժխտում էր Հռոմի Պապի բացարձակ գերապահությունը՝ ֆրանսիական եկեղեցին հռչակելով ազգային ազատ եկեղեցի (ծնթ. թարգմ.):

²² Այս առթիվ թագավորի ուղարկած նամակները կրում են 3 հունվար և 15 փետրվար 1683 թվականը:

Մյուս կողմից նա խոստովանում է, որ Հռոմից երկու տարուց ի վեր թռչակ է ստանում ոչ թե իրեն հավատարմնիչ, այլ տարրեր աշխատանքի համար: Այդ կապակցությամբ նա հարցաքննչին ներկայացնում է մի նամակ, որով կարդինալ Ալտիերին 1681 թ. փետրվարի 25-ին հաղորդում էր, որ «Հավատի տարածման ուխտը անհրաժեշտ համարելով հայերեն և թուրքերեն իմացող մի քանիսն ունենալ Մարսելում՝ այնտեղ բնակվող հայերին սրբազան խորհուրդներ մատակարարելու և միևնույն ժամանակ նավերի վրա թիավարության դատապարտված թուրքերի հետ հաղորդակցության մեջ մտնելու համար, որոշել է Հերաքիեղ քահանային հատկացնել 300 ֆրանկ թռչակ, երեք տարվա համար, որպեսզի նա զբաղվի թե՛ այդ առարկությամբ, և թե՛ շարունակի սրբազան հայերեն գրքերի սխալները»²³:

Վերջապես նա ցույց է տալիս հերետիկոսությունները բացահայտող բավական երկար մի ցուցակ՝ ասելով, որ դրանց՝ հանդիպել է Ռսկանի հրատարակած ժամագրքում և նրա հաջորդի կողմից տպագրված մյուս գրքերում:

Այս հարցաքննության ավարտին, որը բնականաբար կատարվել էր ձևականորեն՝ պահպանելու համար թագավորի հեղինակությունը²⁴, արդարադատության ներկայացուցչի վճռով հաստատվում է, որ «Հերաքիեղի բնակությունը Մարսելում ոչնչով հակառակ չի եղել Նորին Վեհափառության ծառայությանը և ոչ էլ թագավորական իշխանության արտոնություններին ու ազատություններին, որ նա, իրոք, հավատարմնիչի ոչ մի աշխատանք չի կատարել՝ այդպիսի պարտականություն դրված չլինելով նրա վրա «Հավատի տարածման ուխտի» կողմից նրան տրված «հովվական թղթում», և որ այդ թուղթը ներկայացված չի եղել ո՛չ Մարսելի խորհրդարանին, և ո՛չ էլ թեմակալ եպիսկոպոսին, հետևաբար այն պետք է դիտվի միայն իրեն փաստաթուղթ նրան հատկացված թռչակի վերաբերյալ»:

Այսպիսով որոշվում է, որ Հերաքիեղը կարող է շարունակել Մարսելում բնակվել՝ այն պայմանով, սակայն, որ նա իրավունք չպետք է ունենա խառնվելու հայերեն գրքերի մեկնաբանման գործին, ոչ էլ որևէ այլ գործ կատարելու առանց եպիսկոպոսի հրամանի կամ նրա հանձնարարության:

Բացի այդ, դատավճիռը ճշտում էր նաև, որ Սողոմոն Լևոնյանը իր ազգի ձեռագրերի տպագրության գործով զբաղվելիս պարտավոր է ճշտությամբ կատարել 1669 թվականին թագավորի կողմից տրված առանձնաշնորհման պայմանները, ուրիշ խոսքով՝ նա չի կարող ո՛չ գաղտնի աշխատել, և ո՛չ էլ կաթոլիկական հավատին հակառակ որևէ գործ հրատարակել²⁵:

Այս որոշումով Հերաքիեղը, ամրացած լինելով իր դիրքում, առավել ամբարտաճան և պահանջկոտ է դառնում, քան անցյալում: Նա մեջտեղ է հանում լատիններենով գրված մի նոր ցուցակ, որի մեջ զգալիորեն ավելացել էր արդեն իսկ Ռսկանի տպագրված ժամագրքից և մյուս գրքերից դուրս հանված սխալների և հերետիկոսությունների թիվը: Այնուհետև նա բարենորոգչի դեր վերագրելով իրեն՝

²³ R. Simon, *Lettres choisies*, ֆառ. Բ, 124: Նաև՝ Abbé Prévost, *Le pour et le Contre*, ֆառ. 15, էջ 159:

²⁴ Abbé Prévost, *Le pour et le Contre*, էջ 160:

²⁵ R. Simon, *Lettres choisies*, էջ 125: Abbé Prévost, *Loco citato*, էջ 160:

փորձում է վերանայել հայերեն Աստավածաշունչը (Սողոմոն Լևոնյանը մտադիր էր այն վերատպել մասնակիորեն)՝ հավակնելով նրա բնագիրը մոտեցնել լատինական վուլգատային:

Այս հավելյալ պահանջները առիթ են տալիս նոր և բուռն բողոքների, որոնց արձագանքում է Ռիշար Սիմոնը: 1683 թ. սեպտեմբերի 20-ին և 28-ին տպագրված իր երկու մամակներում փարիզաբնակ հմուտ աստվածաբանը հերթով նկարագրում է մարսելահայերի կրած նեղությունները և մեկ առ մեկ հերքում հերետիկոսություններին վերաբերող վերջին ցուցակի բոլոր գլխավոր հոդվածները: Նրա մեղադրական փաստարկումներն ուղղված էին միաժամանակ թե՛ Թովմաս Հերաբիեդի, թե՛ հոռմեական միաբանության, և թե՛ Ֆիլիպ դը Բոսեի դեմ:

«Թագավորի հովանավորության տակ գտնվող հայերին արդարություն անելու համար,- ասում էր նա իր մամակի վերջում,- պատշաճ կլիներ խորհրդակցել Արևելյան Եկեղեցիների աստվածաբանությանը գիտակ անձանց հետ: Այդպիսիներին կարելի էր գտնել ավելի շուտ Փարիզում, քան Մարսելում»:

Այդ ժամանակաշրջանում, երբ Ֆրանսիայի հոգևորականությունը բաժանված էր միմյանց հակառակ երկու խմբերի՝ գալիկանյան ազատությունների կողմնակիցների և դրանց հակադրվողների, Ռիշար Սիմոնի կողմից սկսված այս նոր բանավեճը, ամենայն հավանականությամբ, կարող էր առիթ հանդիսանալ, որ Սորբոնի մի քանի աստվածաբան դասախոսներ դիրք բռնեին ի նպաստ հայերի, բայց դա բնականաբար կվիրավորեր մարսելցի աստվածաբանների ինքնասիրությունը:

Ինչևիցե, 1684 թ. հունվարի 6-ին դ՛՛Լստամպ եպիսկոպոսը հանկարծամահ լինելով Փարիզում ճիշտ այն օրը, երբ որոշել էր մեկնել իր թեմի կենտրոնատեղին՝ բազմելու համար իր եպիսկոպոսական գահին, աթոռանիստ եկեղեցու կրոնավորների ժողովը կանոնիկոս Ֆիլիպ դը Բոսեին շնորհում է առաջնորդական ընդհանուր փոխանորդի և եկեղեցական ատյանի դատավորի կրկնակի աստիճան՝ մինչև թեմակալ մի նոր առաջնորդի նշանակումը կրկին անգամ թափուր մնացած եպիսկոպոսական Աթոռի համար:

Հայ տպագրիչները, որոնց համբերությունն սպառվել էր տառը տարվա արգելքներից և անընդհատ վերսկսվող դժվարություններից հետո, մեծ հույսեր էին կապել դ՛՛Լստամպ եպիսկոպոսի արդարամտության, նրա ազնիվ զգացումների և բարեճորոգչական այն ծրագրերի հետ, որ նա մտադրվել էր իրագործել իր եկեղեցում: Նրա մահը և դը Բոսեի նշանակումը վերջնականապես հուսահատեցրին նրանց, որ այլևս բնավ շնորհ չեն գտնի Մարսելի թեմի ղեկավարության կողմից, ինչ էլ որ նրանք կամենան անել: Հայ տպագրիչներն անտարակույս կարող էին տպարանը փոխադրել Ֆրանսիայի որևէ մեկ այլ քաղաք: 1669 թվականի առանձնաշնորհումը նրանց թույլ էր տալիս անել այդ բանը, բայց դրագոնական հպարտաբերների²⁶ ժամը հենց նոր էր հնչել ամբողջ Ֆրանսիայի համար: Ամեն առիթով և ամեն ժամ մեղադրվելով հերետիկոսության մեջ, հակառակ բազմիցս կրկնված իրենց բողոքների, նրանք համոզվում են, որ իրենց համար ավելի լավ է

²⁶ Լյուդովիկոս ԺԴ-ի ժամանակաշրջանում Ֆրանսիայում բողոքականների դեմ բորբոքված կրոնական հավածանքներ, որոնց նպատակն էր զրաճապատ հեծյալ զինվորների (դրագոնների) միջոցով բռնի դավաճափոխ դարձնել ֆրանսիացի բողոքականներին (ծնթ. թարգմ.):

թագավորի բարկությունից հեռու մնալ, քան թե նորից նրա հովանավորությունը հայցելու անհրաժեշտության վտանգի առաջ կանգնել: Ըստ այնմ էլ 1684 թվականին նրանք վերջնականապես որոշում են հեռանալ թե՛ Մարսելից, և թե՛ Ֆրանսիայից:

Այն գրքերը, որ հայերը տպագրել են մեր քաղաքում իրենց կեցության տարիներին, այսինքն՝ 1673-ից մինչև 1683 թվականը, քչերին են հայտնի: Դրանք մեզ համար այլ հետաքրքրություն չեն ներկայացնում, քան այն, որ մեզ վերհիշեցնում են մի շարք եղելություններ, որոնք կարող են որոշ կարևորություն ունենալ ժէ: դարի տպագրության պատմության և կրոնական ազատությունների տեսակետից: Մինչև այսօր մեզ հայտնի մատենագրական տվյալների համաձայն, այդ գրքերի թիվը հասնում է տասնմեկի: Դրանց փոփոխված, բայց խիստ համառոտ անվանացանկը մեզ տվել է Պր. Հանրիսիմ՝ ըստ Պրոֆ. Ժակ Ծաֆան Սիրպիետի (Հակոբ Ծաֆան Զրպետյան) հատուկ ցուցակի և Ժ. Սեն-Մարտենի՝ Հայաստանի մասին հրատարակած ուղեգրության: Այդ անվանացանկն ամբողջացնելու ուղղությամբ մեր կատարած բոլոր որոնումները հանգեցին այն բանին, որ ցանկն ավելացավ միայն մեկ հատորով:

Ահա դրա ֆրանսերեն վերնագիրը²⁷.

«Livre des Psaumes de David, imprimé dans l'imprimerie du saint Etchmiadzin et de saint Serge le guerrier, par les soins et avec les deniers de Salomon, neveu de feu le docteur Oscan d'Erivan, archevêque.- L'an du Seigneur 1677 et le 18 janvier. - à Marseille»: «Գիրք Սաղմոսաց Դաւթի: Տպեցեալ ի Տպարանի սրբոյ Էջմիածնի և սրբոյն Սարգսի գօրավարի: Արդեամբք և ծախիք Սողոմոնի քեռ որդոյ տեսոն Ոսկանայ արքի Եպիսկոպոսի Երևանցոյ հանգուցելոյ առ Քրիստոս: Յամի Տեառն 1677: Յունուարի ամսոյ ի տասն և ութ: Ի Մարսելիայ»:

Այն անկեղծ և ազնիվ հյուրընկալության հիշողությունը, հյուրընկալություն, որ մի ժամանակ վայելել էր հայկական տպարանի հիմնադիրը Ամստերդամում, Սողոմոն Լևոնյանին մղեց նորից այդ քաղաքը փոխադրելու և այնտեղ վերահաստատելու այն արհեստանոցը, որի ղեկավարությունն իրեն էր վստահված: Ձերբազատված լինելով ամեն տեսակ կաշկանդումներից և վերահսկողությունից՝ նա այստեղ, Մաթևոս Վանանդեցու օժանդակությամբ, տպեց ու վերատպեց բազմաթիվ գրքեր Արևելքից բերված միակ ձեռագրերի հիման վրա՝ առանց այլևս մտահոգվելու, թե դրանց բնագրերը համապատասխանում են, թե՞ ոչ Հռոմի հավատալիքներին:

Հայերի մեկնումը Մարսելից բախտ չբերեց Ֆիլիպ դը Բոսեին: Հակառակ իր զբաղեցրած եկեղեցական բարձր պաշտոնին, նա բանտ գետնից անարգ մի հանցագործի նման: 1686 թվականի հետապնդումները, որոնց առարկա էր դարձել նաև ինքը, սկիզբ էին առել Մարսելում հաստատված գաղտնի մի ընկերակցության գործունեության պատճառով: Այս ընկերակցության նպատակն էր ամբողջ Ֆրանսիայում լայն չափերով գաղտնի վաճառքն ու տարածումը մեծ թվով յանսենական գրքույկների, որոնք գրված էին հօգուտ պապական իշխանության և պարունակում էին բուռն հարձակումներ ընդդեմ թագավորի ու նրա պաշտոնատարների գործունեության: Ընդհանուր փոխանորդ Ֆիլիպ դը Բոսեի մեղսակցությունը կայանում էր այն բանում, որ նրա բնակարանում հայտնաբերվել և առգրավվել էին այդ գրքույկ-

²⁷ Մեր տեղական արխիվային ֆոնդի անխոնջ և հմուտ հետազոտող Պր. Ժ.-Բ. Սարդուին ենք պարտական այս իսկապես հազվագյուտ գրքույկի մի օրինակի հայտնաբերումը (ծնթ. հեղինակի):

ներից մի քանիսը: Բացի այդ, նա մեղադրվում էր գլխավոր ամբաստանյալ բժիշկ Պեյսոնելի՝ նրա մասին տված վկայության հիման վրա: Երկու տարի անց, 1688 թ. փետրվարի 12-ին, նա ազատ արձակվեց Մարսելի արդարադատության ներկայացուցչի վճռով: Բայց նրա բռնած դիրքը բանակիիվների ընթացքում և նրա հաճախակի հարաբերությունները թագավորի թշնամիների և Ինճոկեմտիոս ԺԱ Պապի անձնակեր կողմնակիցների հետ բավարար չափով վկայում են նրա ձգտումների և այն ոգու մասին, որ նա կարող էր ի հայտ բերած լինել հայկական բնագրերի մեկնաբանման ուղղությամբ:

Այսպիսով Մարսելը կորցրեց տպագրական մի հաստատություն, որ կարիք ուներ միայն հովանավորվելու, որպեսզի դառնար նշանավոր թե՛ առևտրական, և թե՛ գրական-մշակութային մակարդակի վրա: Լատինական Եկեղեցին կորցրեց էլ ավելի կարևոր մի բան. կորցրեց ամենամաստավոր առիթը Հայաստանյայց Եկեղեցին մերձեցնելու իրեն:

Ոսկան արքեպիսկոպոսը, ինչպես արդեն տեսանք, հրապարակայնորեն դավանում էր հռոմեական կաթոլիկ վարդապետությունը: Նա իր գրքերի համար առաջուց ընդունել էր սրբագրությունն այն բոլոր հատվածների, որոնք կարող էին հակառակ լինել այդ վարդապետությանը: Նույն զգացումները դրսևորեցին նաև նրա հաջորդները՝ համձն առնելով կատարել Հոմից ուղարկված Հովհաննես Ակուրբ քահանայի կողմից մատնանշված սրբագրությունները: Եթե այդ ժամանակ աղանդավորական և կողմնակցական ամեն տեսակ շահադիտությունից հեռու կանգնած և միմիայն ավետարանական ոգուց ներշնչված մի հոգևոր առաջնորդ զբաղեցրած լիներ Մարսելի եպիսկոպոսական Աթոռը, անկասկած կկարողանար Ս. Էջմիածնի տպարանի հրատարակություններից վերացնել որոշ հիմնական սխալներ՝ առանց իրենից վանելու և դժգոհ թողնելու այդ հաստատության ղեկավարին: Դրա համար բավական էր միայն ցուցաբերել հաշտարար ոգի և՛ արդար մոտեցում այն բոլոր հարցերի նկատմամբ, որոնք սուկ ազգային պարզ արարողություններ էին, ազգային սովորություններ:

Այդ սկզբնական դժվարությունները հարթվելուց և գրքերը մամուլի տակից դուրս գալուց ու մեծ տպաքանակով Արևելքում տարածվելուց հետո մյուս բոլոր անհամաձայնություններն, ի վերջո, ժամանակի ընթացքում, անզգալիորեն կվերանային: Մարսելում հայերի կեցության տևականացումը, թույլ տալով այդ քաղաքի հոգևորականությանը եռանդուն կերպով աշխատել ու գործակցել իրենց հետ, առանձնապես կհեշտացներ տպագրական փառավոր մի արդյունքի հասնելու միջոցները:

Թաղևոս քահանայի բռնությունները, Հերաբիեղի փոփոխամտություններն ու խարդախությունները, Ֆիլիպ դը Բոսեի՝ դաժան բարեպաշտության տեր և կողմնակցական կրքերին հեշտորեն անձնատուր եղող այդ կղերականի նրբին ու ձևապաշտ աստվածաբանությունը վերջիվերջո դառնացրին ու ջղայնացրին կատարելապես լավ տրամադրված մարդկանց և այդպիսով հարյուրավոր տարիներով ետ տարան Հայաստանի քրիստոնյաների մերձեցումը Հոմի Աթոռին:

Ֆրանսերենից թարգմանեց ՊԱՐԳԵՎ ԾԱՀԱԱԶՅԱՆԸ

